Հետաքրքրվածության հայտ ներկայացնելու հրավեր
(կազմակերպության ընտրություն)

Հայաստանի Հանրապետություն

<<Կրթության բարելավում>> ծրագիր

Ֆինանսավորման աղբյուր՝ ՎԶՄԲ Վարկ No. 5387-AM

ՄԶԸ Փոխառություն No. 8342-AM

Ծրագրի համարը՝ P130182

Առաջադրանքի անվանումը. ՉՈՐՍ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հղում՝ ԳՊ-ի տող 1.2.8_բ «Խորհրդատվության էջ»

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է ֆինանսավորում <<Կրթության բարելավում>> ծրագրի իրականացման համար և դրամական միջոցների մի մասը նախատեսել է օգտագործել խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով:

Խորհրդատվական ծառայությունների (Ծառայություններ) շրջանակը ներառում է հետևյալ շինությունների՝

1. Շիրակի մարզի Արթիկի թիվ 3 ավագ դպրոց
2. Շիրակի մարզի Գյումրու Ակադեմիական քոլեջ
3. Երևանի թիվ 142 ավագ դպրոց
4. Երևանի պետական մանկավարժական համալսարանի հենակետային քոլեջ

հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողությունը:

Ծառայությունները նախատեսվում է մատուցել 2019 թվականի հունիսից մինչև 2021 թվականի օգոստոս ընկած ժամանակահատվածում:

Ընտրված կազմակերպությունը ի թիվս այլ առաջադրանքների, պետք է իրականացնի հետևյալ հիմնական գործողությունները.

Ա. Տեխնիկական հսկողության պարտականությունները

Պահանջվում է խորհրդատու թիմի բավարար ներկայությունը ամեն շինարարական հրապարակում: Թիմը պետք է ունենա ղեկավար, որը

պատասխանատու է ընդհանուր տեխնիկական հսկողության աշխատանքների համար բոլոր շինարարական հրապարակներում: Յուրաքանչյուր շինարարական հրապարակում պետք է կցվեն տեխնիկական հսկիչների խմբեր: Յուրաքանչյուր խմբից նշանակված շինարարական Խորհրդատուն պատասխանատու է, որ կապալառուի (ների)՝

- Օգտագործվող շինարարական նյութերը համապատասխան լինեն պահանջվող բնութագրերի հետ:
- իրական կատարվող աշխատանքները համապատասխան լինեն նախագծերի, քանակների և բնութագրերի հետ:
- Կատարվող աշխատանքները համապատասխան լինեն ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված աշխատանքների կառավարման սկզբունքներին:
- նյութերը, որոնք օգտագործվում են թաքնված աշխատանքներում և դրանց ծավալները համապատասխան լինեն նախագծի պահանջներին:

Բ. Խորհրդատուի պարտավորությունները

Ստորև ներկայացված են խորհրդատուի մանրամասն պարտավորությունները տեխնիկական հսկողության իրականացման ընթացքում:

- շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով, խորհրդատուն պետք է ստեղծի փորձառու մասնագետների թիմ, որը պետք է ունենա նմանատիպ աշխատանքների իրականացման համար պահանջվող փորձ և հմտություններ:
- Խորհրդատուն պետք է կազմակերպի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն ինչպես Երևանում, այնպես էլ այն մարզերում, որտեղ գտնվում են ընտրված հիմնանորոգվող դպրոցները:
- Տեխնիկական հսկողություն իրականացնող թիմը պետք է ունենա ղեկավար, ով պետք է հանդես գա որպես տեխնիկական հսկողության պատասխանատու անձ բոլոր շինարարական հրապարակների համար:

Յուրաքանչյուր շինարարական հրապարակում խումբը պետք է ներգրավված լինի տեխնիկական հսկիչներով, ովքեր կապահովեն իրենց մշտական ներկայությունը շինարարական հրապարակում և պատասխանատու կլինեն տեղում տեխնիկական հսկողություն իրականացնելու համար:

- Տեխնիկական հսկողություն իրականացնող խումբը պետք է հատուկ ուշադրություն ցուցաբերի աշխատանքների համապատասխանությանը ՀՀ –ում գործող շինարարության ոլորտի անվտանգության կանոններին և նորմերին ու այն պայմաններին, որոնք պահանջվում են պայմանագրով:

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ ՊՀ-ն հրավիրում է իրավասու կազմակերպություններին (այսուհետ՝ Խորհրդատուներ)՝ ներկայացնելու իրենց հետաքրքրությունը տվյալ առաջադրանքը կատարելու համար: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկատվություն վկայելու անհրաժեշտ ծառայությունները պատշաճ կատարելու համար համապատասխան որակավորման և փորձի առկայության վերաբերյալ:

Կարճ ցանկում ընդգրկվելու չափանիշներն են.

- **Կազմակերպության ընդհանուր փորձը**

  Հիմնանորոգման/շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացման համար վավեր լիցենզիա:

  Հիմնանորոգման/շինարարության համապատասխան ոլորտի առնվազն հինգ (5) տարվա աշխատանքային փորձ:

- **Կազմակերպության հատուկ փորձը**

  Պետական շինարարական ենթակառուցվածքների հետ կապված նախագծերում նախկին ներգրավվածությունը կդիտվի որպես առավելություն;

  Վերջին հինգ տարիների ընթացքում ընկերության կողմից իրականացված լինեն առնվազն երկու նմանատիպ պայմանագրեր:

- **Հիմնական անձնակազմի ընդհանուր որակավորում**

  Տեխնիկական հսկողության թիմը պետք է իր կազմում ունենա (չսահմանափակվի),

  - Թիմի ղեկավար

- Ճարտարագետ/շինարար

- Ճարտարագետ /էլեկտրիկ

- Ջրամատակարարման և կոյուղու ճարտարագետ

- Ջերմաէներգետիկ

Թիմի ղեկավարը պետք է ունենա.

- Ճարտարագիտության, հիմնանորոգման/ շինարարության կառավարման եւ այլ ոլորտներում զգալի նախկին փորձառություն

- Հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ոլորտում առնվազն 10 տարվա աշխատանքային փորձ;

- Դպրոցների նախագծման եւ հիմնանորոգման/ շինարարական աշխատանքներում կիրառելի տեղական եւ միջազգային տեխնիկական ստանդարտների իմացություն;

- Հիմնանորոգման/ շինարարական մեթոդների եւ անվտանգության նորմերի վերաբերյալ գերազանց գիտելիքներ:

Յուրաքանչյուր ճարտարագետ պետք է ունենա.

- Պաշտոնին համապատասխան բարձրագույն կրթություն;

- Համապատասխան ոլորտի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ;

- Համապատասխան ոլորտին վերաբերող տեղական եւ տեխնիկական ստանդարտների իմացություն:

Հետաքրքրված կազմակերպությունների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի Ուղեցույցի 1.9 կետին՝ «Խորհրդատուների ընտրություն և նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքում ՎԶԵԲ-ի վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի Փոխառուների կողմից հունվար 2011թ. («Խորհրդատուների ուղեցույցներ»), որը սահմանում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը՝ շահերի բախման վերաբերյալ:

Կազմակերպությունը կընտրվի կազմակերպության որակավորման հիման վրա ընտրության(CQ) եղանակով՝ ՀԲ Խորհրդատուների ուղեցույցի համաձայն:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ստորև նշված հասցեով՝ բոլոր աշխատանքային օրերին՝ հետևյալ ժամերին 11:00 - 13:00 և 14:00 - 17:00 :

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն՝ մինչև 2019թ. մայիսի 6-ը ներառյալ, (առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստով) մինչև 17:00 տեղական ժամանակով, հետևյալ հասցեով.

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ ՊՀ

ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 , 0070, Հայաստան

Էլ. Փոստ. info@cfep.am

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել վերը նշված էլեկտրոնային փոստով կամ զանգահարել՝

(+37410) 57-56-90 (65) – 1.2 ենթաբաղադրիչի ղեկավար Գրիգոր Բաղդասարյանին

(+37410) 57-56-90 (27) – գնումների գլխավոր մասնագետ Վարդան Պողոսյանին

հեռախոսահամարներով: